


ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ԶԱՍՅԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. [Angleterre]

Ամեն քան ժողովրդի մի-
ջոցով, ժողովրդի կամքով եւ
ժողովրդի համար:

Իւրաքանչիւր եւ ընդհա-
նուրի հաւատարմաւէս քարե-
կեցիկ կենսը — ղա է ճշմա-
րիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՍԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ 5 ֆր.
ԿԵՍ ՏԱՐԵԿԱՆ 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ 1/2 „

Ժողովուրդ, դու ինքդ մի-
այն կարող ես ձեռք բերել քո
ազատութիւնը:

Արեան ծախճանք — ահա
ազատութեան ծանապարհը:

Ժողովուրդ, մի՛ աղերսիր,
այլ պահանջիր եւ ձեռք բեր

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ — ԳԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԳԻՍ

ԵՐԱՐՈՐԴ ՏԱՐԻ

ԼՕՆԴՕՆ

Nr 3. ՅՈՒԼԻՍ. Nr 3.

1896

ՄԻԱՄՍԵԱՅ



ԽՕՍԱԿԻՅՍ.

Ընցեալ օրը ես հանդիպեցայ անգլիա-
ցի բարեկամներէս մին եւ վերաւորուած հա-
յու անձնասիրութեամբ շեշտակի հար-
ցուցի:

— Գէհ, ի՞նչ կըսէք հիմա Արեւելքի
գործերու մասին:

— Ի՞նչ կըսեմ, կրկնեց հարցս անգլի-
ացի բարեկամս. — այն կըսեմ, որ սու-
թանը տակաւին երկար Ժամանակ կարող
է հանգիստ ննջել իր երկու ականջներով
հանդերձ իր հարէմի հուրիներու փափուկ
բարձրու վրայ: Ընդ որ արիւնագոյն պան-
չելի երազները դեռ շատ օրեր պիտի օր-
րեն անոր արեայական քունը:

— ... ? ?

— Գուր զարմացած էք... Չը գիտեմ
ինչո՞ւ, որովհետեւ աշխարհը դեռ տակն ու
վրայ չէ եղեր, եւ թշուառ հայերէն ետքն
այսօր անբաղդ կրէտացիներն ալ վեց մեծ
տէրութիւններու եփած ապուրն է որ կու-
տեն... Այդ մեծ պետութիւններն իրենց
պաշտօնակից սուլթանին նեցուկն են: Եւ
չէ՞ք տեսներ միթէ որ Կ. Պօլսոյ անցեալ
տարւայ հայոց շարժումներուն եւ հայաս-
տանի հայոց կոտորածներու միջոցին այդ տէ-
րութիւններն իրենց նաւերը վախէն Միջեր-
կրականի հեռաւոր ալիքներու վրայ միայն
կը խաղացնէին, մինչդեռ այսօր այն փոք-
րիկ եւ քաջ կղզին են պաշարած քաջա-
բար եւ արի կրէտացիներու վրայ ծանրա-
նալով՝ անոնց կըստիպին հնազանդիլ սուլ-
թանի պահանջներուն: Այդ՝ ուրիշ բան
չէ, եթէ ոչ հզօրագոյններուն իրաւունքը
տկարներու վրայ: Այդ՝ եւրօպական դի-
ւանագիտութիւնն է իր ամբողջ մերկու-
թեամբ:

— Ի՞նչ կըսէք, բարեկամ, հայ-
կական միամտութեամբ ընդմիջեցի ես վեր-
դովուած. — Ի՞նչ կըսէք, եւրօպական մա-
մուլն ամբողջ ալ այսօր սուլթանին դէմ
կը գրեն եւ ինքը Ռուսաց ցարն իսկ զայ-
րացած է անոր դէմ եւ խիստ լեզու կը
գործածէ:

— Սքանչելի զայրոյթ արգարե, բա-
ցականեց անգլիացին հեգնական շեշտով:
— Յարը կարծես գիւտ մը ըրածի պէս

այսօր միայն, այսքան տարի այնքա՞ն ա-
րիւն թափուելէ վերջ, նոր արթնցողը նը-
ման է. թատրօնական դեր մը կը խաղայ եւ
կը պօռայ թէ ինչո՞ւ սուլթանը քրիստոն-
եայները կը ջարդէ... Իբր չը գիտէր որ իր
Նէլիտօֆներու ձեռնտուութեամբ է որ կա-
տարուեցան այնքան կոտորածներ: Ի՞նչ
փափուկ սիրտ կը ցուցնէ այժմ ցարը, ճիշդ
նոր արթնցողի պէս... Հիանալի, հիա-
նալի է այդ եւրօպական կատակերգութիւնը:

Ի՞նչ կըսեմ այդ ըսելով՝ քիչն տակ
միթմրթաց, կարծեմ հայհոյանքներ: Ըն-
ծայն, ի բոլոր սրտէ ես մասնակցեցի այդ
հայհոյանքներուն...:

— Եւրօպական պետութիւններու քօն-
սէրը խիստ սրտաշարժ է եղած միշտ, երբ
խնդիրը փոքր ու անպաշտպան ազգերը ջար-
դելու եւ ջարդողներն անպատիժ թողնելուն
կը վերաբերէր. եւ փշոտ մացառներու պէս
անոնք ամենքն ալ մէկ եւ անմատչելի կը-
լան, երբ իրենց արժանաւոր եղբայր սուլ-
թանի ոճրագործութիւնները գոցելու եւ չը
տեսնալու խնդիրը կուգայ... Եւ այսօր
ցարը մէկ տեղէն եւ միւս տէրութիւններն
ալ միւս տեղէն հարկ կը տեսնան սուլ-
թանին քիչն քիչ մը հարուած տալ —
եւ գիտէ՞ք ինչո՞ւ. — հարկաւ իրենց համար
զրաւելիք անկիւններ կը պատրաստեն ու կը
տաքցնեն թիւրքի մէջ: Արեւելն ալ,
Մակեդօնիան ալ պիտի խղզեն այդ կեղծ
բարեկամները, ինչպէս խղզեցին Հայաս-
տանը: Եւ այսպէս իրերի վեճակը թիւր-
քի մէջ պիտի քաշկրտեն, թէն այդ
ժամանակամիջոցին նորէն եւ նորէն արեան
հեղեղներ թափուին թիւրքի քրիստոն-
եաներու երակներէն, մինչեւ օր մը չէ օր մը
այդ մեծ տէրութիւնները յարմար դատեն
իրենց շահերուն գոհացում տալ եւ թիւր-
քիան պատառ-պատառ ընել: Այդ օրը եւ
միայն այդ օրը անոնք դառն ճշմարտութիւն-
ները կը զարնեն սուլթանին երեսը եւ անոր
գլխին կը կարդան արդարութեան դատաս-
տանը. բայց այդ օրն թիւրքս մոռցած կը-
լան խապառ թէ տանջուած, արիւն թա-
փած եւ իրաւատէր ազգեր կան թիւրքի մէջ,
որոնց դատը ժամանակին այնքան
զղուելի եւ յանցապարտ կերպով անգիտա-
ցաւ ինքը Եւրօպական եւ որոնց դարձուց սուլ-
թանի գազանային քմահաճոյքին գոհ:

Ընդլիացին լուեց մի քիչ եւ հարեց. —
— Ամեն տէրութիւններ եւ անոնց ներ-

կայացուցիչներ կեղծաւոր խարդախներ են:
Եթէ հայերդ կրնաք բան մը ընել...
կուգեմ ըսել կրակ ձգել թիւրքի մէջ,
որն այսօր դարձած է ամբողջովին պայ-
թուցիկ նիւթ մը, ան ասեն...:

Ընդլիացին խօսքը չը վերջացուց եւ ձեռ-
քս ամուր սեղմելով, մնաս բարեւ ըսաւ,
հեռացաւ, քիչն տակը միթմրթալով. —
»Անոնք ամենքն ալ կեղծաւոր խարդախ-
ներ են...:



ՍԵՐ ՈՒ ԿԱՐՄԻՐ
ԵՐԳ.

Թըշուառ օրեր սեւ տանջանքի
Կեանքի,
Երբ քաջ հային տեղ չը մընաց
Կեանք:

*
Նախնիքների օրհնութիւնը՝
Թոյնը
Նոյա հային սեւ նըզովքի —
Դժոխքի:

*
Զգոյշ եղիր, արի՛ մարտիչ.
Մասնիչ
Քեզ կը հսկէ — իր կեանքը շինէ,
Շուռ է:

*
Զգոյշ եղիր. այն դաւաճան
Ժրաշան
Դաւեթ լարէ քո ղէմ, գործիչ
Կործիչ:

*
Փառամունք խոր նախամէջ՝
Անձն
Իր՝ կըսէ թէ՛ արծւի թեւեր
Ձէ՛ վեր:

*
Ուրիշ տաք արեան զընով,
Քընով
Անցած ինքը, դաւիտիք փրցուց,
Ուղղուց:

*
Հակառակորդ հանեց աղմուկ,
Ինք մուկ,
Ժակ ու ծուկէն նետեր շարեց,
Հարեց:

*
Քեզ հարուածեց, եւ թշամին
Անդին
Խոր գերեզման քեզ պատրաստեց,
Մաստեց:

*
Աւազակներ մեծաքանակ
Դիմակ
Հազան փրքուն ազգասէրի,
Սէրի:

*
Անոնք եւան հըրապարակ
Արագ,



ԳԻՆ ... ԱՐԵՎԵԼԵԱՆ ՀԱՐՑԸ ԵՄԵՐՈՒՄ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԱԿԱՆ ՆԵՐԸ ԹՈՂ ՀՐԱՊԱՐԱԿ ԵՂԱՆ՝

գալեան ևն:

Պ. — Ազգն անոնց երախտապարտ է և անոնց համար մի-մի կոթողներ պիտի կանգնէ:

Հ. — Ի՞նչ վարձատրութիւն պիտի ընէ ազգը Հնչակեաններուն:

Պ. — Գոթոթի գոնեքը պիտի բանայ անոնց համար:

Հ. — Միւսներն ի՞նչ պիտի վայելեն:

Պ. — Արքայութեան ամեն վայելքները:

Հ. — Որո՞նք են ամենէն մեծ ազգասէրները:

Պ. — Չերազ, փորձուգալեան և խել մը ազգասիրական ընկերութիւններու զանազան անդամներ:

Հ. — Որո՞նք կը ներկայացունեն յոյս, հաւատ, սէր:

Պ. — Կրկին անոնք են:

Հ. — Որո՞նք կը ներկայացունեն արիւն, կրօն, նոյնը:

Պ. — Հնչակեանները:

Հ. — Որո՞նք են նախախնամութեան կողմէ Հայ ազգին տրուած անհրաժեշտ գլուխները:

Պ. — Գարձեալ առաջինը են. 2., փ. և այլն:

Հ. — Եթէ ազոնք չըլլային ազգին վիճակն ի՞նչ պիտի ըլլար:

Պ. — Անկա պիտի կորսուէր:

Հ. — Ուրեմն, ազոնք են Հայոց կեանքի կանգուն հսկայ նեցուկ սիւները:

Պ. — Այո, ազոնք են արդէն Հայ ազգին խարխուլ, նեցուկը, ներկայացուցիչը և ինքնին մենակ արդէն Հայոց ազգ են:

Պ. — Ուսկից ելան այդ հանձարները:

Պ. — Կ. Պոլսոյ օրօրանէն:

Հ. — Ուրեմն Հայոց Կ. Պոլսն ի՞նչ է Հայ ազգին համար:

Պ. — Կորագոյն Կոյեան տապան մըն է փրկ. կուծեան ազգիս և անոր մէջ կան ամեն տե. սակ և ամեն կարգի կենդանիներ՝ սկսեալ վե. դարաւորներէն և չորսալիններէն մինչև գրա. գէտները, խմբագիրները և վարժապետները:

Հարցաբնոյցը (փառաւոր ձեռով). — Յաջո. դուքիւն և փառք ամենեցուն:

Ազգերտը (երկիւղածութեամբ). — Ամէն X.

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ (ՆՈՐ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ)

Հ. Հայաստան ազատելու համար ի՞նչ պէտք է ընել:

Պ. Պէտք է ներքին ոյժ գոյացնել և ըս. պատել որ Արեւելեան խնդիրը բացուի. (ականջը խօսի, պ. Չերազ):

Հ. Ի՞նչ է ներքին ոյժը:

Պ. Գաղտնի կերպով ծնող, ծածուկ կերպով մեծող ու ամենեւին մարդու չերեցող զօրութիւն մըն է: Իր էն մեծ կուսակիցն է փոր. թուրքեան որ թԱ տարի Մարտիկոյ մէջ Ար. մէնիս տպելով Մայր Հայրենիքի մէջ այդ ոյժէն գոյացուց և մարդ չիմացաւ, տաճիկ կառավարութիւնն ալ չիմացաւ. Բուրժուէն ալ ուրոնք վերջիս Հայ գեղերը թալանեցին շատ փնտուեցին ու չգտան. ինչու որ Արեւ. խել. ը. գեռ բացուած չէր: Չուկս Կէտիւկի գէպքը, անցողակի ըսենք, ներքին ոյժ չէր, այլ անոր անժամանակ արտայայտութիւնը:

Փորթուրքեան ներքին ոյժ գոյացնելու համար... իր մէջը, այս պահուս Ազգէն փոխ առած 3000 Քրանդով Գաղիոյ մէջ կը գտնուէ:

Հ. Հիմակ միայն «Արմէնիա»-ով կրնանք ներքին ոյժ յառաջ բերել:

Պ. Այո կամ ոչ, ադ չէ խնդիրը: «Արմէնիա» մեր էմէլթարն է և քանի որ փորթուրքեան ողջ է ան անգագար պիտի տպուի:

Մենք ապագային համար յոյսերնիս Արմէնիանի մը մտածած մէկ հնարքին վայր դրած ենք:

Հ. Ի՞նչ է այդ հնարքը:

Պ. Ահաւասակ. Արեւ. խնդրոյն բացուելէն ճիշտ 5 օր առաջ ներուժականները մէկ մէկ շեղ քլորոֆորմ առած ճաճկաստան պիտի մըտնեն և հոն շիջուուն կնքուած բերանները բանալով քլորոֆորմ պիտի բռնեն նախ Սուլթանին քթին, ապա ներքինիներուն, պալատական հանձններուն, քիւրտ ցեղապետներուն և Հայ Էֆէնդիներուն քթին. ու սպառնալքով կամ աղաչանքով պիտի ստիպեն այս ամբա-

րիշտներն որպէսզի քլորոֆորմը մէկ երկու անգամ վեր վեր քաշեն: Այս ընելէ վերջ զէնք պիտի փոխադրեն. Հայաբնակ նահանգներու մէջ բանակներ պիտի կազմեն ու չորրորդ օրը ընդհանուր ռազմափորձեր կատարելէ զինի պիտի յարձակին թշնամին վրայ Մարտիկոյ հա. յերէնը երգելով: Այդ յիշեալ շոգիացող հե. ղուկը մարդս թմբեցնելու, անգագար ընելու և 5 օր վերջ նորէն արթնցնելու յատկութիւն մը ունի: Հետեւաբար ուշաթափ եղած թշնամին չպիտի կարողանայ մեր դէմ կուռի ելնել ու պիտի չարաչար յաղթուի:

Հ. Արեւ. խնդրոյն ճիշդ որ օր բացուելը կըրնանք ստուգապէս առաջուց գիտնալ:

Պ. Այո կրնանք. բացողներէն ու գոցողներէն կամ ֆալ նայել տալով:

Հ. Տաճիկը կրնայ չթողուլ որ Հայերը Արեւ. խնդ. բացուելուն սպասեն:

Պ. Իրաւունք չունի չթողուլ, բայց եթէ կըրնին ելնէ ու Ազգին մնացածն ալ ջարդել ուզէ, ինքն իր ձեռքով Արեւելեան խնդիրը բացած կըլլայ և մեր փափագածն ալ արդէն այդ է:

Հոս հարկ կը համարեմք ըսել, որ այդ ծրարագիրը արած են ազգին էն երեւելիները, օրինակ փարիզու հայ ջոջերու քանի մը քովթէները, ատոնց հետ նաև Չերազ, որ Արեւելեան խնդիրը բանալու էն մեծ ջատագովներէն է, թէեւ կը կարծէ որ շատ տարիներ դեռ սպասելու ենք այդ. իսկ մինչև այդ ատենը, նա, en attendant, ինքը զինքը պիտի գովէ, Գուրեանի լալիկան ոտանաւորները պիտի թարգմանէ ազգասիրաբար, զանազան հայ քովթէներու մէջ պիտի ստնայ ելնէ միշտ օգուտ մը տալով կամ առնելով՝ անտարակոյս և Հնչակեանները սուտերով պիտի զրպարտէ:

ՊՈՒՆԱՆԻՍ. ԹՕԹՕ.

Անշունթ Գործադրութիւնը.

Իովէի հայրական ճաշարաններէ մէկի մէջ Դիւնյոյ սեղանի վրայ ինձ հետ նստած գլուխեցաւ մէկ անծանօթ, որու անունով մէկ ուիշը տեսնել յանձարարած էին ինձ:

Ճաշարանի սպասաւորը՝ սեղանակցիս ձեռքէն երակուրներէ ցանկը առնելէ և ինձ տալէ՝ երջ, այսպէս կը պօռար դէպի խոհանոց դարձնելով գլուխը. — Մէկ լահանայ սարմա պ. թողմասին.

Սպասաւորի պօռոցով ներկայացուած այս պարոնին ո՞վ լինելը ուզեցի գիտնալ. ստուգելու համար թէ, արդեօք դա էր ինձ յանձնարարուած անձը, թէ ոչ:

— Կերեցէք պարոն, հարցում մը. դուք պարոն Թովմաս ինչեան կը կոչուիք:

— ... ահա:

Այս երկրորդ անսպասելի յայտնութիւնը զիս շատ հետաքրքրեց, ուստի քիչ մը ատեն առջևս դրուած պատառաքաղին ու գտնակին հետ խաղալու նման լանք մը ընելէ վերջ՝ շարունակեցի.

— Արեւմ. գիտնալ արգեօք, թէ որչափ ժամանակ է ի վեր... ահա եղած էք:

— Արեւ. ամիսը պէլքիմ անցաւ պ. Սուրէն Սիրունի առջև երգում ընել և նիմոս տալս (դու հասկացիր ստորագրութիւն):

— Ո՞վ է այդ Սուրէն Սիրունը:

— Հերթի սէնտէ, անգիի աշխարհէն կուգաս ի՞նչ է. ո՞վ պիտի ըլլայ, Սուրէնը՝ մեր կօմիտեան ներկայիչն (ներկայացուցիչ) է:

— Կերեցէք դեռ նոր կը լսեմ... Է՛հ, այդ պարոնը ի՞նչ կրնէ այստեղ:

— Ինչ որ պզտիկ Նշանը վախճի կրնէ:

— Օրինակի համար ի՞նչ:

— Ե՛յ, ինչ պիտի ընէ, իշտէ կը կազմակերպէ, մարդ կը գրէ, ընկերութիւն կը կազմէ, փարայ կը թօփէ (հաւաքէ), կը խօսէ, շատ աղուոր կը խօսէ՝ միշտ քիչ մը չըհասկցուիր:

— Այդ ամենը ո՞ր կրնէ:

— Իրեն օտային (սենեկին) մէջ, երթաւ կը տեսնես:

— Սենեկէն դուրս ուրիշ տեղ տեսնալ կարելի չէ:

— Չեմ կարծեր:

— Ինչու, միթէ բնաւ դուրս չըգար:

— Ինչու չէ. պարկած օտային տակի ճաշարանը կիջնայ հաց ու տելու և...:

— Ա՛յ ուրիշ տեղ...

— Փօստախանէն կերթայ: Հատ նամակ կը գրէ, թափուլով. (յանձնարարալ) ալ կաննէ, իլէ մեծ կիւռնէն. անցեալ օր շատ մը տէֆտէրներ (տետրակներ) եկան՝ միւհիւլէնմիշ (կնքուած) կրած. անոնց մէջ պիտի գրուի մեր անունները ու մեր տաւ փարան, ու պիտի ղըրկի Հայաստան...: Հատ սաղամ (վստահելի) են, շատ...:

— Իրենիւնը հարցնեմ տէ, վաղ խապարը կուտամ քեզի:

Կիչ վերջը ընկերներէն ստուգեցի թէ արդարեւ այդ պ. Սուրէն Սիրունը երեւակայական անձնաւորութիւնը չէ եղեր: ԲԷՅՆԻՒՐ.

ԼՈՒՐԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ. (ՄԵՐ ՅԱՏՈՒԿ ԹՂԹԱՅԷՆ)

Ամերիկայի մէջ յեղափոխական նոր ընկերութիւն մը ևս երևան ելած է, բայց այս անգամայ ընկերութիւնը՝ կատակ չէ, ինչպէս իր շատ մը նախորդները՝ երեւակայական չէ, այլ բոլորովին գործնական և որ զարմանալին է, առան տեսակ վտանգներէ ու տաղուկներէ առատ ըլլալէ զատ, այդ նորակազմ ընկերութեան բախտաւոր անդամները պիտի վայելն նաև զուարճութիւն, խրախմանք, հաճոյք:

Եւ ահա թէ խնդիրը ինչի մէջ է: Ամերիկայեան հայերի խելօքներէն խումբ մը մարդիկ նկատելով, որ սուլթանի հրամայած և գործադրած ջարդերէն վերջ՝ հայոց թիւը զգալի կերպով նուազած է. նկատելով, որ սուլթանի այդ դժոխային խորհուրդի ճիշտ նպատակն էր Հայաստանի մէջ հայոց թիւը նուազեցնելով մուսուլմաններէ թիւը բարձր ցոյց տալ Եւրոպացիներուն, որոշեցին ընկերութիւն մը կազմելով դրամ հաւաքել և այդ դրամով Ամերիկայի մէջ հայ թիւը բարձրացնել: Այս նպատակին հասնելու համար, սրճարաններու և ճաշարաններու մէջ այս հարցը հրապարակ նետեցին և երկար բարակ վիճարանութեանց դուռ բացին: Ոմանք՝ Հայաստանէն հայերը Ամերիկայ գաղթեցնելու որոշման յանգեցան, և այդ սկզբունքի վրայ ալ ընկերութիւն կազմեցին: Ոմանք, աւելի խելօքները, վճռեցին ընկերութիւն մը կազմել շուտով ամուսնանալու և մի-մի հատ ամերիկուհի կողակցներ ընտրելով իրենց, անյապաղ որդեկանութեան սք. գործով զբաղելու. այս խելօքներէն ելան, բայց պէտ շատ մը առարկութիւններ ելան, բայց իրենց ազգասիրական բունն զգացմանց բոցով նոյն իսկ իրենց ընդդիմախօսները համոզել յաջողեցան: Եւ այսօր, ընկերութեան հիմնուելէն հազիւ տասը օր անցած, արդէն անդամների թիւը չորս հազարի հասած է: Մեր ամերիկայեան հայերը համբաւեցան թեւեւ ամբողջաւոր ընկերութեան միաբանութեան մի ախպիսի դաս տուին Հայ ազգին, որ շիտակ բոլորովին անսպասելի էր: Հնչակեան, Գաշակեցական, Խաչակիրեան, Հայկազնեան, Մուսուտեան, Գաղթականեան, Չերազեան, փորթուրքեան, Հայ միութեանական և այլն և այլն ոչ մի կուսակցութիւն չի կորողացաւ դիմադրել այս նոր հոսանքին. այսօր ամենքն ալ կազմալուծեալ վիճակի մը մէջ են: Բայց... սրբափ ճշմարիտ է ժողովրդական առածը թէ, առանց փուշի վարդ չըլլաւ: Այս ընկերութիւնը հազիւ կազմուած և դեռ իրենց յարմար անուանով մը չի մկրտած, ահա երկապառակութիւն մըն է կըծագի մէջերնին: Եւ մէկ օրուան մէջ իրենք ալ իրենց շարքին կազմալուծուելու վիճակին կը հասնին: Հիմա նախկին անանուն ընկերութեան անդամները ահագին բազմութեամբ, լէգէոններով դէպի Մորմոնականութիւն կը դիմեն, որը շատ աւելի նպատակաւոր մար կը գրտնան Հայ ազգը շուտով, շուտով բազմացնելու սուրբ գործին:

Այժմ հարանեաց շարքը պիտի բացուի, անվերջանալի, զուարճալի և ազգօգուտ շարք մը: Մ.

ԼՕՆԻՕՆ. ՊԷՆԵՍԻՒՆ՝ ՏՊԱՐԱՆ.